

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ հ.2

2021 թվականի հոկտեմբերի 11-ին տեղի ունեցավ Երևանի Ա. Չեխովի անվան հ. 55 հիմնական դպրոցի մասնակավարժական խորհրդի նիստը՝ մասնակցությամբ 96 անդամների /հարգելի պատճառով բացակա՝ 8/:

Օրակարգում՝

4. Դպրոցի տնօրենի թափուր տեղի հավակնորդներին տրված ձայների հաշվիչ հանձնաժողովի ընտրություն /զեկուցող՝ մանկխորհրդի նախագահ Գ.Սարուխանյան/:
5. Դպրոցի տնօրենի թափուր տեղի հավակնորդների զարգացման ծրագրերի քննարկում /զեկ.զեկ.՝ Տ.Մելքոնյան, Դ.Մինասյան, Գ. Սարուխանյան/:
6. Մանկխորհրդի թեկնածուի ընտրություն:

Լսեցին՝ հաշվիչ հանձնաժողովի ընտրության հարցը: Մանկխորհրդի նախագահ Գ.Սարուխանյանը, նիստը սկսելով, առաջարկեց ընտրել հաշվիչ հանձնաժողով՝ դպրոցի տնօրենի թափուր տեղի հավակնորդների ձայները հաշվելու համար:

Արտահայտվեցին՝ ուսուցիչներն առաջարկեցին՝ Ն.Նիկոյանի, Ս. Հարությունյանի և Ա.Վարդանյանի թեկնածությունները:

Օրագրերը ներկայացնելու համար Մ.Սարտիրոսյանն առաջարկեց սահմանել 10-15 րոպե: Ելույթների հաջորդականությունը որոշվեց ըստ այբբենական կարգի՝ Տ.Մելքոնյան, Դ.Մինասյան, Գ.Սարուխանյան:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Քվեարկության արդյունքները ներկայացնելու համար բաց քվեարկությամբ ընտրել հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով
2. Ն.Նիկոյան,
3. Ս. Հարությունյան,
4. Ա.Վարդանյան:

2. Համաձայն ՀՀ Կառավարության 2021 թվականի օգոստոսի 27-ի հ. 1380-Ն որոշման 13.1 կետի՝ ծրագրերը ներկայացնելու համար հավակնորդներին տրամադրել հավասար ժամանակ՝ 15-ական րոպե:

3.Ելույթների հաջորդականությունը սահմանել ըստ այբբենական կարգի՝ Տ.Մելքոնյան, Դ.Մինասյան, Գ.Սարուխանյան:

Լսեցին՝ դպրոցի տնօրենի թափուր տեղի հավակնորդների զարգացման ծրագրերը:

Համաձայն ՀՀ Կառավարության 2021 թվականի օգոստոսի 27-ի հ. 1380-Ն որոշման՝ իրենց ծրագրերը ներկայացրին Տ. Մելքոնյանը, Դ.Մինասյանը, Գ. Սարուխանյանը: Սահմանված կարգով նրանք ներկայացրին դպրոցի առավելությունները, ուժեղ և թույլ կողմերը, իրենց ծրագրի նպատակներն ու դրանց իրականացման ուղիները: Հավակնորդները պատասխանեցին ուսուցիչների հարցերին: Ծավալվեց քննարկում:

Արտահայտվեցին՝ Մ.Սարտիրոսյանը, Ի. Գասպարյանը, Տ.Անանիկյանը, Ս. Վարդանյանը և այլք, գնահատեցին հավակնորդների ներկայացրած ծրագրերը:

Անցկացվեց փակ քվեարկություն, որին մասնակցեց մանկխորհրդի 94 անդամ:

Լսեցին՝ ընտրության՝ հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:

Հանձնաժողովը ներկայացրեց փակ գաղտնի քվեարկության արդյունքը. ձայները բաշխվել են հետևյալ կերպ.

1. Տ.Մելքոնյան – 7 կողմ,
2. Դ.Մինասյան – 1 կողմ,
3. Գ.Սարուխանյան – 84 կողմ,
4. Անվավեր – 2 քվեաթերթիկ:

Ելնելով փակ գաղտնի քվեարկության արդյունքներից՝ մանկխորհուրդը
ՈՐՈՇՈՒՄ Է՝

Երևանի Ա.Չեխովի անվան հ.55 դպրոցի տնօրենի՝ մանկխորհրդի կողմից ընտրված թեկնածու համարել առավելագույն ձայներ ստացած Գ. Սարուխանյանին:

Մանկխորհրդի նախագահ՝  Գ.Սարուխանյան
Մանկխորհրդի քարտուղար՝  Տ.Գառնիկյան